

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝ ք. Արտաշատ



Տարածքը	2096 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	88700 հա
<i>այդ թվում՝</i> վարելահողեր	33300 հա
Քաղաքային համայնքներ	4
Գյուղական համայնքներ	93
Գյուղական բնակավայրեր	94
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	272.7 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i> քաղաքային	80.3 հազ. մարդ
գյուղական	192.4 հազ. մարդ

ՀՀ Արարատի մարզը զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի մոտ 7.1%-ը: Մարզի բնակչությունը 2003թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 8.5%-ը: Ընդ որում, բնակչության 70.5%-ը բնակվել է գյուղական բնակավայրերում:

ՀՀ Արարատի մարզը գտնվում է հանրապետության հարավ-արևմտյան մասում, գրավում է Արարատյան դաշտավայրի զգալի մասը: Սահմանակից է Թուրքիային և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը: Տնտեսության զարգացման համար նպաստավոր է Երևան քաղաքի հետ անմիջական հարևանությունը:

Մարզն իր մեջ ընդգրկում է Արարատի, Արտաշատի և Մասիսի տարածաշրջանները: Մարզի քաղաքներն են Արտաշատը, Արարատը, Վեդին և Մասիսը, առկա են նաև 94 գյուղական բնակավայրեր:

Մարզի տարածքը եղել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան գավառի մի մասը: Վերջինիս տարածքում են գտնվել պատմական հին Հայաստանի երկու (**Արտաշատ և Դվին**) մայրաքաղաքները: **Արտաշատը** (մ.թ.ա. II դ., 180թ.) գտնվել է Երասխ և Մեծամոր գետերի հին հունների միախառնման տեղում՝ Խոր Վիրապի բլուրների վրա և շրջակայքում, այժմյան Արտաշատ քաղաքից 10 կմ հարավ-արևելք: Գտնվելով Արարատյան բարեբեր դաշտավայրում, առևտրական ճանապարհների հանգույցում, քաղաքը եղել է ոչ միայն Հայաստանի, այլև Արևելքի առավել զարգացած քաղաքներից մեկը և մայրաքաղաքի

դեր կատարել շուրջ 500 տարի: Հայ ժողովրդի պատմության մեջ ոչ մի քաղաք այնպիսի նշանակալից հետք չի թողել, ինչպես Արտաշատը:

Դվին մայաքաղաքը հիմնադրվել է IV դարի 30-ական թվականներին, երբ հայոց Խոսրով Կոտակ թագավորը (330-338թթ.) արքունիքը Արտաշատից տեղափոխելով Դվին, այն հայտարարել է նոր մայրաքաղաք: Դվինն այդ ժամանակաշրջանում Հայաստանի ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև հոգևոր ու մշակութային կենտրոնն էր (պահպանվել են կաթողիկոսարանի դահլիճի, դիվանատան, ճեմարանի, գանձատան, մատենադարանի հետքերը, ինչպես նաև հեթանոսական տաճարի տեղում կառուցված Կաթողիկե եկեղեցին): Դվինը եղել է նաև միջազգային առևտրի խոշոր կենտրոն: Այստեղ են հատվել միջազգային 4 մայրուղիներ՝ Կովկաս ու Հարավային Ռուսաստան, Փոքր Ասիա ու Հարավային Եվրոպա, Հյուսիսային Աֆրիկա ու Բյուզանդիա, Միջագետք ու Միջին Ասիա:

Խոր Վիրապ վանք-ամրոցը գտնվում է մարզի Փոքր Վեդի գյուղի մոտակայքում, բլրի վրա: Հնում այն եղել է պատմական Արտաշատ քաղաքը, իսկ Խոր Վիրապի բլուրներին՝ միջնաբերդը:

Ներկայիս վանք-ամրոցի տեղում եղել է արքունի բանտը: Խոր Վիրապը օձերով, թունավոր միջատներով լի մի խոր փոս էր, ուր գցում էին դատապարտյալներին:

Ըստ Ազաթանգեղոսի և մյուս պատմիչների՝ Գրիգոր Լուսավորիչը 13 տարի այս վիրապում է կրել իր չաչարանքները: Ի հիշատակ Սրբի չարչարանքների 5-րդ դարում այս Սբ. վիրապի վրա վանք է հիմնվում և հաստատվում միաբանություն, իսկ Ներսես Շինարար կաթողիկոսը Սբ. վիրապի վրա նոր եկեղեցի է կառուցում:

Խոր Վիրապ դպրության կենտրոնը 13-րդ դարում ունեցել է վարդապետատուն՝ մոտ 40 աշակերտով, ուսուցչապետեր՝ Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին, Ներսես Մշեցին:

Դպրության կենտրոն լինելուց բացի 10-11-րդ դարերում այն ռազմական կարևոր հենակետ է եղել հայ ժողովրդի համար:

930-ական թվականներին Հայաստան արշաված արաբական բանակի դեմ համատեղ ճակատամարտ են կազմում Աբաս Բագրատունի և Գագիկ Արծրունի հայոց արքաները: Խոր վիրապի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում հայկական միացյալ զինուժը զլխովին ջախջախում է արաբական 13 հազարանոց բանակը:

1970-80 թթ. Խոր վիրապում կատարված վերանորոգման աշխատանքներից հետո պարսպի հարավային հատվածի թաղածածկ նկուղի վրա կառուցվել է դիտակետ, որտեղից բացվում են Արարատ լեռան վեհաշուք համայնապատկերները:

Մարզի տարածքում են գտնվում *Սբ. Հակոբ եկեղեցին*, *Քեղվա ամրոցը* (XI դ.), ինչպես նաև *Պարույր Սևակի տուն-թանգարանը* (գ.Չանգակատուն):

Խոսրովի պետական արգելոցը («Խոսրովի անտառ» է կոչվել Խոսրով Բ. Կոտակ թագավորի անվամբ) գտնվում է Հարավային Հայաստանի կենտրոնական մասում: Ընդգրկում է 27 հա տարածություն, գտնվում է ծովի մակերևույթից 1600-2300 մ բարձրության վրա:

ՀՀ Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է: Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

Մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը 2003թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 8.6 %, գյուղատնտեսու-

թյան համախառն արտադրանքի ծավալում՝ 13.2%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 1 % և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 2.7%:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունն է և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը.

- ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն),
- բ) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա),
- գ) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ասբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

2003թ. մարզում գործել են 102 արդյունաբերական, 20 շինարարական, 11 գյուղատնտեսական, 6 ձկնորսության ու ձկնաբուծության, 11 տրանսպորտային, 260 ծառայություններ մատուցող և 610 մանրածախ առևտրի օբյեկտներ, որոնցից 396-ը խանութներ են, 192-ը՝ կրպակներ, 15-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 3-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի և 4 -ը՝ սպառողական ապրանքների շուկաներ:

2003թ. մարզում գործել են 112 հանրակրթական, 20 երաժշտական ու արվեստի և 7 մարզական դպրոցներ, 74 նախադպրոցական հիմնարկ, 4 պետական և 2 ոչ պետական միջին մասնագիտական, 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական և 1 գիտական հաստատություններ, 2 թանգարան, 98 գրադարան, 1 հյուրանոց, 60 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 8 հիվանդանոց, 1 մանկատուն, մշակութային-սպորտային կենտրոններ և այլն:

Արտաշատի տարածաշրջան

Վարելահողեր	11250 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	38
Գյուղական բնակավայրեր	39
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	102.7 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	25.2 հազ. մարդ
գյուղական	77.5 հազ. մարդ

Տարածաշրջանում 2003թ. գործել են 38 արդյունաբերական, 7 շինարարական, 4 գյուղատնտեսական, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 4 տրանսպորտային, 87 ծառայություններ մատուցող և 219 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 97-ը խանութներ են, 112 -ը՝ կրպակներ, 6 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 3-ը՝ սպառողական ապրանքների և 1 -ը՝ գյուղատնտեսական շուկաներ:

2003թ. գործել են 41 հանրակրթական, 9 երաժշտական և գեղարվեստի, 2 մարզական դպրոցներ, 34 նախադպրոցական, 1 պետական միջին մասնագիտական, 1 ոչ պետական միջին մասնագիտական և 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 43 գրադարան, 22 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 3 հիվանդանոց և 1 հյուրանոց:

Արտաշատ քաղաքը (25.2 հազ.բնակիչ) մարզկենտրոնն է: Քաղաքը գտնվում է Երևանից 29 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10 կմ հյուսիս-արևմուտք), զբաղեցնում է 800 հա տարածություն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների, ալյուրի արտադրություն), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը (ճենապակուց և հախճապակուց տնտեսական-կենցաղային իրերի, բնական քարերից երեսապատման նյութերի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է:

2003թ. քաղաքում գործել են 28 արդյունաբերական, 3 շինարարական, 4 տրանսպորտային, 36 ծառայություններ մատուցող և 180 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 97 -ը խանութներ են, 73 -ը՝ կրպակներ, 6 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 3 -ը՝ սպառողական ապրանքների և 1 -ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

Քաղաքում 2003թ. գործել են նաև 6 հանրակրթական, 2 մարզական դպրոցներ, 3 երաժշտական և արվեստի դպրոցներ, 9 նախադպրոցական հիմնարկ, 3 գրադարան, 1 ոչ պետական միջին մասնագիտական, 1 պետական միջին մասնագիտական և 1 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 2 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 3 հիվանդանոց և 1 հյուրանոց:

Արարատի տարածաշրջան

Վարելահողեր	15500 հա
Քաղաքային համայնքներ	2
Գյուղական համայնքներ	29
Գյուղական բնակավայրեր	29
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	92.7 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	33.6 հազ. մարդ
գյուղական	59.1 հազ. մարդ

Տարածաշրջանում 2003թ. գործել են 42 արդյունաբերական, 7 շինարարական, 4 գյուղատնտեսական, 2 ձկնորսության ու ձկնաբուծության, 2 տրանսպորտային, 67 ծառայություններ մատուցող և 87 մանրածախ առևտրի օբյեկտներ, որոնցից 46 -ը՝ խանութներ են, 34-ը՝ կրպակներ, 4 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1 -ը՝ սպառողական ապրանքների և 2 -ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ են:

2003թ. գործել են նաև 38 հանրակրթական, 5 երաժշտական և գեղարվեստի, 4 մարզական դպրոցներ, 19 նախադպրոցական հիմնարկ, 2 պետական և 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 2 թանգարան, 30 գրադարան, 17 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 3 հիվանդանոց:

Արարատ քաղաքը (20.5 հազ.բնակիչ) գտնվում է Երևանից 48 կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936թ.: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ իր

գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբոցեմենտային իրերի արտադրությունը):

2003թ. քաղաքում գործել են 18 արդյունաբերական, 5 շինարարական, 1 տրանսպորտային, 22 ծառայություններ մատուցող և 50 մանրածախ առևտրի օբյեկտներ, որոնցից 32-ը խանութներ են, 11-ը՝ կրպակներ, 4-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1 -ը՝ սպառողական ապրանքների և 2 -ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Քաղաքում գործել են նաև 5 հանրակրթական և 2 երաժշտական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 2 գրադարան, 2 մարզական դպրոցներ, 2 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն և 1 հիվանդանոց:

Վեղի քաղաքը (13.1հազ.բնակիչ) գտնվում է Վեղի գետի աջ ափին, Երևանից 35 կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որում կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսապատման նյութերի, էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը:

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է:

2003թ. քաղաքում գործել են 11 արդյունաբերական, 2 շինարարական, 2 գյուղատնտեսական, 1 տրանսպորտային, 19 ծառայություններ մատուցող և 38 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 26 -ը խանութներ են, 8 -ը՝ կրպակներ, և 4 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1 -ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկա:

Քաղաքում 2003թ. գործել են նաև 3 հանրակրթական և 2 երաժշտական դպրոցներ, 1 մարզական դպրոց, 3 նախադպրոցական հիմնարկ և 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 2 գրադարան, 1 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հիվանդանոց:

Մասիսի տարածաշրջան

Վարելահողեր	6550 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	26
Գյուղական բնակավայրեր	26
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	77.3 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	21.5 հազ. մարդ
գյուղական	55.8 հազ. մարդ

Տարածաշրջանում 2003թ. գործել են 22 արդյունաբերական, 6 շինարարական, 3 գյուղատնտեսական, 3 ձկնորսության ու ձկնաբուծության, 5 տրանսպորտային, 106 ծառայություններ մատուցող և 304 մանրածախ առևտրի օբյեկտներ, որոնցից 253 -ը խանութներ են, 46-ը՝ կրպակներ, 5 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ: Գործել են նաև 33 հանրակրթական, 6 երաժշտական ու գեղարվեստի և 1 մարզական դպրոցներ, 21 նախադպրոցական և 1 պետական միջին մասնագիտական ուսումնական հիմնարկներ, 1 գիտական հաստատություն, 25 գրադարան, 21 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 2 հիվանդանոց և 1 մանկատուն:

Մասիս քաղաքը (21.5հազ.բնակիչ) գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հեռավորության վրա: Խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում փայտանյութի և փայտե իրերի արտադրությունը (փայտաստղոցման և ռանդման արտադրություն, հատակի ոչ հավաքածու փայտե ծածկերի, այդ թվում՝ չհամալրված մանրատախտակի արտադրություն), քիմիական նյութերի և քիմիական արտադրանքի արտադրությունը (ներկերի, լաքերի, նմանատիպ նյութերի, տպագրական ներկերի և հատակի մածուկի արտադրություն) և ծխախոտի ապրանքների արտադրությունը (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա):

2003թ. քաղաքում գործել են 17 արդյունաբերական, 2 շինարարական, 59 ծառայություններ մատուցող և 131 մանրածախ առևտրի օբյեկտներ, որոնցից 103 -ը խանութներ են, 20-ը՝ կրպակներ և 8 -ը՝ հանրային սննդի օբյեկտներ:

Քաղաքում 2003թ. գործել են նաև 6 հանրակրթական և 3 երաժշտական դպրոցներ, 1 մարզական դպրոց, 6 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 մանկատուն, 1 գրադարան, 3 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հիվանդանոց:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Արտաշատ	ք. Արտաշատ
Արարատ	ք. Արարատ
Մասիս	ք. Մասիս
Վեդի	ք. Վեդի

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Աբովյան	Աբովյան
Ագատաշեն	Ագատաշեն
Ագատավան	Ագատավան
Այգավան	Այգավան
Այգեզարդ	Այգեզարդ
Այգեպատ	Այգեպատ
Այգեստան	Այգեստան
Այնթափ	Այնթափ
Ավշար	Ավշար
Արայեզ	Արայեզ
Արարատ	Արարատ
Արաքսավան	Արաքսավան
Արբաթ	Արբաթ
Արզավանդ	Արզավանդ
Արմաշ	Արմաշ
Արևաբույր	Արևաբույր
Արևշատ	Արևշատ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Բաղրամյան	Բաղրամյան
Բարձրաշեն	Բարձրաշեն
	Կաքավաբերդ
Բերդիկ	Բերդիկ
Բերքանուշ	Բերքանուշ
Բյուրավան	Բյուրավան
Բուրաստան	Բուրաստան
Գեղանիստ	Գեղանիստ
Գետազատ	Գետազատ
Գետափնյա	Գետափնյա
Գոռավան	Գոռավան
Դալար	Դալար
Դաշտավան	Դաշտավան
Դաշտաքար	Դաշտաքար
Դարակերտ	Դարակերտ
Դարբնիկ	Դարբնիկ
Դեղձուտ	Դեղձուտ
Դիմիտրով	Դիմիտրով
Դիտակ	Դիտակ
Դվին	Դվին
Եղեգնավան	Եղեգնավան
Երասխ	Երասխ
Զանգակատուն	Զանգակատուն
Զորակ	Զորակ
Լանջազատ	Լանջազատ
Լանջանիստ	Լանջանիստ
Լանջառ	Լանջառ
Լուսաշող	Լուսաշող
Լուսառատ	Լուսառատ
Խաչփառ	Խաչփառ
Կանաչուտ	Կանաչուտ
Հայանիստ	Հայանիստ
Հնաբերդ	Հնաբերդ
Հովտաշատ	Հովտաշատ
Հովտաշեն	Հովտաշեն
Ղուկասավան	Ղուկասավան
Մասիս	Մասիս
Մարմարաշեն	Մարմարաշեն
Մխչյան	Մխչյան
Մրգանուշ	Մրգանուշ
Մրգավան	Մրգավան
Մրգավետ	Մրգավետ
Նարեկ	Նարեկ
Նիզամի	Նիզամի
Նշավան	Նշավան
Նոյակերտ	Նոյակերտ
Նորաբաց	Նորաբաց
Նորամարգ	Նորամարգ
Նորաշեն	Նորաշեն
Նոր Խարբերդ	Նոր Խարբերդ
Նոր Կյանք	Նոր Կյանք
Նոր Կյուրիկ	Նոր Կյուրիկ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Նոր ուղի	Նոր ուղի
Շահումյան	Շահումյան
Շաղափ	Շաղափ
Ոսկետափ	Ոսկետափ
Ոստան	Ոստան
Պարույր Սևակ	Պարույր Սևակ
Ջրահովիտ	Ջրահովիտ
Ջրաշեն	Ջրաշեն
Ռանչպար	Ռանչպար
Սայաթ -Նովա	Սայաթ -Նովա
Միս	Միս
Միսավան	Միսավան
Միփանիկ	Միփանիկ
Սուրենավան	Սուրենավան
Վանաշեն	Վանաշեն
Վարդաշատ	Վարդաշատ
Վարդաշեն	Վարդաշեն
Վեդու գինու գործարան	Վեդու գինու գործարանին կից
Վերին Արտաշատ	Վերին Արտաշատ
Վերին Դվին	Վերին Դվին
Տափերական	Տափերական
Ուրցալանջ	Ուրցալանջ
Ուրցաձոր	Ուրցաձոր
Փոքր Վեդի	Փոքր Վեդի
Քաղցրաշեն	Քաղցրաշեն



Խոր Վիրապը

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003Թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	10 000	5108	4892
Ծնվածներ	111	57	54
Մահացածներ	74	38	36
Ամուսնություններ	39	X	X
Ամուսնալուծություններ	4	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	20.8	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ`			
նախադպրոցական	110	56	54
հանրակրթական	1709	873	836
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	95	49	46
միջին մասնագիտական	51	26	25
բարձրագույն մասնագիտական	5	3	2
Առողջապահության ոլորտ`			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	18
Մարզիկներ, մարդ	76	39	37
Զբաղվածներ, մարդ	4151
նրանցից` գիտական հիմնարկներում	1	1	0
նրանցից` գիտության դոկտոր	0.0	0	0
գիտության թեկնածուներ	0.0	0	0
ուսուցիչներ	150	77	73
բժիշկներ	15
կրտսեր բուժանձնակազմ	37
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	169	86	83
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1592
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	423	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	11720
թատրոն	238
համերգ	-	-	-
թանգարան	814
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	77	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, մարդ	78
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	23	X	X